ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ՍՈՎԵՏԱ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՉՈՐԲՈՐԴ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

(Երևան 12—17 նոյեմբերի 1969 թ.)

Կոնֆերանսի քննարկմանն էր դրված երեք պրոբլեմ. 1. Բյուզանդիա և Հայաստան, 2. Ֆրանսիական հեղափոխության պատմության ուսումնասիրության ներկա էտապը, 3. Սովետա-ֆրանսիական դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը 1924 թ.:

Առաջին պրոբլեմի մասին սովետական կողմից ներկայացված էր Հ. Մ. Բարթիկյանի, Ս. Բոռնազյանի և Կ. Ն. Յուզբաշյանի ընդհանուր զեկուցումը, որտեղ մանրամասն խոսվում էր Հայաստանի և Բյուզանդիայի քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ փոխհարաբերությունների մասին, կայսրության դարավոր նվաճողական քաղաքականության մասին՝ Հայաստանի նկատմամբ, հայ ժողովրդի պայքարի մասին իր ինքնուրույնությունն ու անկախությունը պաշտպանելու համար, ինչպես և Բյուզանդական կայսրության մեջ հայ տարրի խաղացած դերի մասին: Ֆրանսիական կողմից այդ թեմայով զեկուցում կարդաց ՀՍՍՀ ԳԱ արտասահմանյան անդամ պրոֆ. Սիրարփի Տեր-Ներսեսյանը, որ հանգամանորեն ներկայացրեց հայ-բյուզանդական հարաբերությունների ուսումնասիրման ներկա էտապը, ցույց տվեց այն նպաստը, որ հայ ժողովուրդը ունեցել է Բյուզանդական կայսրության քաղաքական, ռազմական և մշակութային կյանքում: Զեկուցողը խոսեց նաև բյուզանդական հեղինակների երկերի միջնադարում կատարված հայերեն թարգմանությունների, ինչպես և հայ հեղինակների երկերի՝ հունարեն թարգմանությունների մասին: Առաջին պրոբլեմի առնչությամբ Հայաստանի միջնադարյան պատմությամբ զբաղվող մասնագետները (Բ. Առաքելյան, Ս. Արևշատյան, Լ. Խաչերյան, Կ. Յուզբաշյան, Ա. Տեր-Ղևոնդյան, Լ. Ազարյան, Հ. Բարթիկյան) անդրադարձան հայ-բյուզանդական հարաբերությունների տարբեր կողմերին:

Երկրորդ պրոբլեմի մասին սովետական կողմից զեկուցեց պրոֆ. Ա. Մանֆրեդը, որն ընդգծեց Վ. Ի. Լենինի աշխատությունների կարևորությունը ֆրանսիական հեղափոխության պատմության ուսումնասիրության գործում՝ հատկապես մեթոդոլոգիայի հարցերում: Նա խոսեց նաև ռուս և սովետական պատմաբանների նվաճումների մասին տվյալ հարցի հետազոտման ուղղությամբ, մատնանշեց այն հարցերը, որոնք դեռևս կարիք ունեն ավելի խոր ուսումնասիրության: Ֆրանսիական կողմից զեկուցեց պրոֆ. Գոդշոն, որը տեղեկացրեց Ֆրանսիայում և Եվրոպայի այլ երկրներում ֆրանսիական հեղափոխության պատմությամբ զբաղվող կենտրոնների, նրանց կատարած աշխատանքի, հեղափոխության պատմությամբ զբաղվող տարբեր մասնագետների կոնցեպցիաների, ինչպես նաև հեղափոխության՝ այլ երկրներում ունեցած ազդեցության մասին և այլն: Ելույթներ ունեցան Ա. Մոբուլը, ակադ. Աբգար Հովհաննիսյանը, Ի. Դյուրանը, Նարոչնիցկին, Ա. Աղոն և Բ. Պորշնևը, որոնք մանրամասն լուսաբանեցին ֆրանսիական հեղափոխության և հետագա շրջանների բազմաթիվ հարցեր:

Երրորդ պրոբլեմի մասին ֆրանսիական կողմից զեկուցեց ակադ. Մ. Բոմոնը, որը կանգ առավ Սովետական Միության Ֆրանսիայի կողմից ճանաչվելու ամբողջ նախապատմության վրա, նշեց այն կարևորությունը, որ ունեցավ Ֆրանսիայի համար ՍՍՀՄ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը: Սովետական կողմից զեկուցեց պատմական գիտությունների թեկնածու Ա. Զուբարյանը: Այդ պրոբլեմի առթիվ ելույթներ ունեցան Զ. Բելոուսովան և Լ. Պ. Մանասերյանը:

Կոնֆերանսի աշխատանքները ամփոփեցին ակադեմիկոսներ Ա. Ս. Գուրերը և Շնեյդերը: Նրանք ընդգծեցին զեկուցումների և ելույթների գիտական բարձր մակարդակը և կոնֆերանսի նշանակությունը սովետական և ֆրանսիական պատմաբանների, ինչպես և ժողովուրդների բարեկամության ամրապնդման ու հետագա զարգացման գործում: